104. ԳԱՅՆԱԿԵՐ ԳՑՈՒԴ

Գյուղի շրջակայքում կան մի քանի մատուռներ, ուխտատեղիներ և երկու վանք՝ Հրեշտակապետաց և Ծաղկոց։ Դրանցից առաջինը, համաձայն արձանագրության, շինված է ։ՌՄԿԴ։ (1815) թվին[1]*, իսկ Ծաղկոց վանքի պատերի մեջ ագուցված են հետևյալ խաչքարերը՝ համեմատաբար հին արձանագրություններով.*

1044. ԽԱՉՔԱՐԻ վրա՝

։ՋԻԵ։ (1476)։

Հրատ. Լալաեան, V, 343։

***1045. ԽԱՉՔԱՐ**, ագուցված է Ծաղկոց վանքի հյուսիսային պատի մեջ, ներքուստ.*

Սուրբ խաչ տէր Ոհան սպարոն Գաբրիելին քաւարան. թվ. ։ՌՃԼԸ։ (1689)։

Հրատ. Բարխուդարեանց, 316։ Լալաեան, V, 343։

105. ՓԻՓԻ (ՀԻՆ ԵՎ ՆՈՐ)

Ծամքոր գետի աջ ափին գտնվող Փիփի գյուղի բնակիչները վատ կլիմայի պատճառով տեղափոխվել են ոչ շատ հեռու, ավելի բարձր դիրք ունեցող վայր և հիմնել Նոր Փիփի գյուղը, որի տեղում, ըստ երևույթին, հնում էլ գյուղ է եղել։ Թե Նոր և թե հին Փիփիներում պահպանվել են արձանագրություն ունեցող հուշարձաններ։ Մենք չկարողացանք այցելել այդ վայրերը։ Փիփի անունը ծագել է, ըստ տեղական ավանդության, Փեփրոնյա անունով նահատակ կույսի անունից, որը թաղվել է եկեղեցու մեջ։

***1046. ՀԻՆ ՓԻՓԻ**, կիսավեր վիճակում կանգուն է երկու կամարների վրա կանգնած թաղակապ եկեղեցին. Նրա հարավային կողմում մի մատուռ, որը կոչվում է* Բարսամ նզնավոր, *ներսում գտնվող երեք տապանաքարերից արձանագրություն ունի միայն մեկը.*

Ես Մաղագայ եպիսկոպոս կանգնեցի զխաչս հաւ · · · եղբաւրն իմոյ տէր Պար[սամ]յ արհեպիսկոպոսին. թվ. ։ՋԶ։ (1457)։

Հրատ. Բարխուդարեանց, 301։ Լալաեան, 311։

***1047. ՀԻՆ ՓԻՓԻ** եկեղեցու մկրտության ավազանի վրա՝*

Յիշեցէք ի Քրիստոս Ծասուրն և կողակիցն իւր Մարեան. թվ. ։ՌՃԺԹ։ (1670)։

Հրատ. Բարխուդարեանց, 300։ Լալաեան, V, 311։

***1048. ՀԻՆ ՓԻՓԻ**, եկեղեցու մուտքի բարավորի վրա՝*

Կամաւն Աստուծոյ մեք Փիփեցոց ժողովուրդս միաբան շինեցաք զեկեղեցիս. ի հայրապետութեան տեառն Պետրոսի, ձեռամբ Սարգիս վարդապետին. յիշխանութեան Մուրթուզա Ղուլի խանին։ Յիշեցէք ի Քրիստոս տանուտէր Վարդանէսն և կողակից Մարեան։

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին։*

Հրատ. Բարխուդարեանց, 301։ Լալաեան, V, 311։

---

[1] Ջալալեանց, I, 163։ Բարխուդարեանց, 316. Լալաեան, V, 343։